

ՎԱՐՊԱՏՈՆ - 2016

ՄԻՐՈՒ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



«Մայիսը Հայրավայրին Կովկասում միաժամանակ հաղթանակների ամիս է, մեր ժողովուրդների՝ դարերով փափագած ազգային ազատագրության տենչալի ժամը, ինչը, հարկավ, իմաստնանում է նաեւ Սայաթ-Նովային նվիրված այս տոնախմբությանը», - ասաց իր ելույթում բանաստեղծ, թարգմանիչ, թիվիսիի պատվավոր քաղաքացի Գիվի Շահնազարը։ Ժողովրդին հղված ողջույնը նա ավարտեց մեծ տաղերգուի՝ հայերենից վրացերեն սեփական թարգմանությունների ընթերցումով։

Վրաստանի խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի գրողների միության ղեկավարներ Մադվալա Գոնաշվիլին եւ Ռեւազ Միշվելաձեն, իրենց ելույթներում ընդգծեցին միջնադարյան մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի դերը հայ եւ վրաց ժողովուրդների միաբանության գործում։

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, իր ելույթում, մասնավորապես, ասաց.



«Քսովրեյի» համույթը

«Մնանք հավատարիմ Սայաթ-Նովայի՝ միմյանց հանդեպ սիրով ու մարդկային արժանապատվությամբ ապրելու պատգամներին»։

Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ, բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը, արժեւորելով աշուղ-բանաստեղծի տաղերգությունը, եւ նրա ապրած ժամանակաշրջանը գուգահեռելով մեր օրերին, ընդգծեց. «Այսօր ակամատես ենք լինում մեծ սերերի ու, ցավոք, նաեւ՝ մեծ նամարդությունների։ Երեւի տեղին է հիշելու Սայաթ-Նովայի՝ «Յիս Մարթ-մարթ իմ, նամարդութիւն չիմ ուզում...» հավատամքը եւ ապրելու ա՛յդ հավատամքով»։

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեորգ Սնիչյանն ասաց. «Սայաթ-Նովայի մեծությունը, որ պահել է մեր երկու ժողովուրդների միասնականությունը, այլ նպատակ եւ օրինակ չունի համայն աշխարհում։ Ուրեմն, այս պայծառ երկրում թող իմ ժողովուրդն ապրի փառս հայ եւ վրաց ժողովուրդների վաղվա լավագույն եւ լուսավոր օրվա»։

«Վրաստան» թերթի խմբագիր, Վրաստանի հայերի միության փոխնախագահ Վան Բայբուրյանը ներկայացրեց հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ինչպես ինքը նշեց՝ ա՛յն լեզուներով, որոնցով ստեղծագործում էր Սայաթ-Նովան։ Սայաթ-Նովան եղել է մնում է թիվիսիի ու ողջ Վրաստանի սիրո եւ եղբայրության խորհրդանիշը եւ պատահական չէ, որ նրա հիշատակը, արդեն մեկ դարից ավելի, նշվում է մի հրապարակում, ուր թեւ-թեւի կանգնած են հայկական Սուրբ Գեորգը, վրացական Սիոնը, հրեական Սինագոգան եւ Սզկիթը։

Ելույթներից հետո սկսվեց «Վարդատունի» համերգային բաժինը, որին մասնակցեցին վիրահայ երգիչներ, դերասաններ, թիվիսիում գործող մանկա-պատանեկան՝ հայկական՝ «Մուշ», «Ջեյրան» (գեղ.ղեկ.՝ Ս.Երիցյան), «Վանը»



Թովմաս Պողոսյան

(գեղ.ղեկ.՝ Լ.Կաշավանիձե), «Անի» (գեղ.ղեկ.՝ Անգելինա Նազարյան-Քոչյան) եւ վրացական պարի երիտասարդական համույթ «Ռուսթավի» (գեղ.ղեկ.՝ Կ.Կաշվանի) պարախմբերը, «Վարդատունի» ավանդական մասնակից՝ վրացական «Քսովրեյի» (գեղ.ղեկ.՝ Էլ.Շոշիտաշվիլի) երգչախումբը։

Ջերմ ծափողջույնով բեմ ուղեկցվեց Վարդատունյան հանդիսատեսի կողմից սիրված, Հայաստանի հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա» երգի վաստակավոր համույթը՝ գեղարվեստական ղեկավար Հայաստանի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի առաջնորդությամբ։ Համույթի բարձրարվեստ



Երգչուհի Իռեն Ավագյանը

կատարումները գոհունակ ու բուռն հույզերով արձագանքվեցին ներկայների կողմից։

Միջոցառումը կազմակերպել էին «Վրացահայերի միությունը», Հայաստանի եւ Վրաստանի Մշակույթի նախարարությունները, թիվիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը՝ Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությամբ։

ՀՈՒՆԻՍՏԱ ՔԱՂԱՅԱՆ

ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ ՅԱԿՈՎ ՊՈԼՈՆՍԿԻՆ Է

ՌՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՅԱԿՈՎ ՊՈԼՈՆՍԿԻ

ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅ

Ալիքներով միշտ կլանում, ծովերն ավազ շատ են տանում,
Բայց ափերը նրանց հավերժ ավազով են պատված մնում։
Շատ երգեր է թըցնում նաեւ ժամանակն իր թելին անդարձ,
Նոր աշուղներ աշխարհ գալիս, նոր սերունդն է լսում նրանց։
Որ ես մեռնեմ, գիտեմ՝ աշխարհն իմ տաղերը կմոռանա,
Բայց քեզ համար, իմ նուրբ ընկեր, ուրիշ աշուղ աշխարհ չի գա։
Երբ ես մեռնեմ, գիտեմ՝ ոչ ոք իմ կորուստը չի նկատի,
Կհիշես դու խաղերն իմ այն, որոնց շունչը քեզ կպատի։
Ես քո սիրտը զմայլեցի, իսկ դու միտքս մռայլեցիր,
Քեզ ծիծաղով հմայեցի, իսկ դու լացո շռայլեցիր։
Արդ ես եթե քո թունդ սիրով մի օր կորչեմ, մեռնեմ խաղաղ,
Ասա՛ դու ինձ, արդյոք որտե՞ղ պիտի հանգչի աճյունն իմ պաղ։
Արդյոք այնտե՞ղ, հեռո՛ւ, անհայտ, այն ափերում անհիշատակ,
Թե՞ հենց այստեղ, քո խառն աչքում ու քեզ մոտիկ՝ ծփեցնու տակ։
1851թ.

Թարգմանությունը՝ ՎԱՀԱՆ ՄԱՂԱՅԱՆԻ

Այսօր երեւի քչերին է հայտնի, որ Սայաթ-Նովային նվիրված առաջին բանաստեղծությունը գրել է ռուս բանաստեղծ Յակով Պոլոնսկին։ Նրա այդ գագելը, որ ստեղծվել է հանճարեղ գուսանի տաղերի խոր ազդեցությամբ, տպագրվել է 1851թ., այն ժամանակ, երբ Սայաթ-Նովայի անունը շատերին հայտնի չէր, երբ Գեորգ Ախվերդյանը դեռեւս չէր հրատարակել նրա խաղերի՝ Դավթարը, որն, ինչպես գիտենք, լույս է տեսել դրանից մեկ տարի անց՝ 1852-ին, Մոսկվայում։ Հարց է ծագում. ոչազանցի ռուս բանաստեղծը որտեղի՞ց գիտեր Սայաթ-Նովային եւ ինչպես էր ծանոթացել նրա ծնագիր Դավթարին, որ մեծ սիրով ու նվիրումով գրում էր իր այդ գագելը։

Մինչ այդ մասին խոսելը, եկեք մի փոքր ետ գնանք ու ծանոթանանք Յա.Պոլոնսկու կենսագրությանը։ Նա ծնվել է 1819թ. դեկտեմբերի 18-ին Ռյազանում, զինվորականի ընտանիքում։ Հայրը՝ Պյոտր Պոլոնսկին, ռուսական բանակի սպա էր եւ 1830-ականներին, իշխան Բարսեղ Բեիբուրովի (Բեիբուրյան) մարզպանության օրոք ծառայում էր Երեւանում՝ զբաղեցնելով նորաստեղծ Հայկական մարզի կառավարչության հատուկ հանձնարարությունների գծով պետի պաշտոնը։ Երեւի այդ շրջանում էլ նա իր որդուն պատմել է Հայաստանի մասին, իր մամակներում նկարագրել աստվածաշնչյան լեռան՝ Արարատի վեհաշուք տեսքը եւ հաղորդել Նոյյան տապանի մասին լեգենդը։ Եվ այդպես Յա.Պոլոնսկու սրտում հետաքրքրություն ու սեր է արթնացել դեպի Հայաստանն ու հայ ժողովուրդը, դեպի նրա շքեղ բնությունը։

Պատանի Յակովը Ռյազանի գիմնազիան ավարտելուց հետո ընդունվել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Այնտեղ սովորելու տարիներին ծանոթացել է հայ ուսանողներին, ինչպես եւ ծովանկարիչ Հովհ.Այվազովսկու, բանաստեղծ Ռ.Պատկանյանի, բժիշկ-սայաթնովագետ Գ.Ախվերդյանի եւ ուրիշների հետ, նրանց հետ հաստատել սերտ կապեր։ Նա հենց Գ.Ախվերդյանից էլ լսել է Սայաթ-Նովայի մասին եւ նրա մոտ տեսել գուսանի խաղերի Դավթարը։

Յա.Պոլոնսկին համալսարանն ավարտել է 1844թ. եւ աշխատանքի ուղարկվել Օդեսա, որտեղ երկու տարի մնալուց հետո, 1846-ին տեղափոխվել է Կովկաս, իր երազած եզերքը։ Այստեղ նա նախ եղել է «Ձակավկազսկի վեստնիկ» թերթի խմբագրի օգնական, ապա նշանակվել է «Կավկազսկի կալենդար» տարեգրքի խմբագիր՝ այդ պաշտոնում աշխատելով մինչեւ 1851 թվականը։ Թիֆլիսյան գործունեության հինգ տարիների ընթացքում Յա.Պոլոնսկին աշխատանքի բերումով շրջել է Կովկասի շատ բնակավայրերում, ավելի մոտիկից ճանաչել վրացիներին ու հայերին, ծանոթացել նրանց կյանքին ու կենցաղին, այցելել Երեւան ու վեհապալած Արարատը տեսել իր աչքով եւ սքանչացել նրա անսահման գեղեցկությամբ։ Կովկասում եւս Պոլոնսկին շրջապատված է եղել նշանավոր մարդկանցով։ Նրան սիրով է ընդունել նաեւ Գ.Ախվերդյանը, որն այդ ժամանակ Մոսկվայից վերադարձել էր Թիֆլիս։ Ախվերդյանն այստեղ նրան ավելի խորությամբ է ներկայացրել Սայաթ-Նովայի տաղերը, որոնք մեծ ազդեցություն են գործել բանաստեղծի հոգեկան աշխարհի վրա։

Թիֆլիսում Յա.Պոլոնսկին Գ.Ախվերդյանի օգնությամբ մի ուսումնասիրություն է գրել՝ նվիրված Սայաթ-Նովային եւ առաջին անգամ արձակ ռուսերեն է թարգմանել մեծ գուսանի խաղերից մի քանիսը։ Նա Կովկասի նշանավոր քաղաքների մասին նույնպես մի գիրք է գրել, որի էջերում հավաստի տեղեկություններ են հաղորդվում այդ բնակավայրերում ապրող ազգությունների վե-

րաբերյալ։ Միաժամանակ Պոլոնսկին Թիֆլիսում հրատարակել է իր չափածո գործերի երկու ժողովածու՝ «Սագանդարը» (1849թ.) եւ «Մի քանի բանաստեղծություն» (1851թ.), որոնց մեջ գետեղել է այդ տարիներին գրած իր բոլոր բանաստեղծությունները՝ նվիրված Վրաստանին ու Հայաստանին։

Յա.Պոլոնսկին 1851-ին տեղափոխվել է Պետերբուրգ ու նվիրվել ստեղծագործական աշխատանքի, 1859-60թթ. խմբագրել է «Ռուսկոյե սլովո» հանդեսը, այնուհետեւ գրեթե մինչեւ իր կյանքի վերջը գտնվել է պետական ծառայության մեջ, սկզբում՝ Արտասահմանյան գրաքննչական կոմիտեում, ապա՝ Մամուլի գործերի գլխավոր վարչության խորհրդում։ Վախճանվել է 1898 թ. հոկտեմբերի 30-ին, աճյունը տեղափոխվել է հուղարկավորվել է իր ծննդավայր Ռյազանում։

Պոլոնսկին անցյալի ռուս բանաստեղծների մեջ առաջինն է եղել, որ անհուճորեն սիրել է Սայաթ-Նովային եւ հայ մշակույթի պատմության մեջ է մտել որպես մեծ գուսանի տաղերի ռուս առաջին ուսումնասիրողն ու թարգմանիչը։ Հովհ.Թուսնյանը այդ առթիվ գրել է. «Ռուսաց բանաստեղծներից, եթե չեն սխալվում, առաջինը Պոլոնսկին է եղել, որ ուշք է դարձրել Սայաթ-Նովայի վրա ու հիացել։ Պոլոնսկին հանգուցյալ Ախվերդյանի մոտիկ բարեկամը, թերեւս ընկերն է եղել։ Նրա մոտ է տեսել Սայաթ-Նովայի երգերի տետրակը եւ, ծանոթանալով, 1851թ. «Կավկազ» թերթի NN 1-2-ում մի ոգեւորված հոդված է գրել, բնորոշել, գնահատել ու երգերից էլ մի քանիսը թարգմանել»։ Մեծ բանաստեղծը մի այլ առիթով, կրկին անդրադառնալով նույն թեմային, ավելացրել է, որ «Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը՝ սկսած 1850-ական թվականներից առաջին ուսումնասիրողները եղել են նրա կենսագիր եւ հրատարակիչ Գեորգ Ախվերդյանը եւ ռուս բանաստեղծ Յակով Պոլոնսկին»։

Այսպիսով, ինչպես Թուսնյանն է նշում, սայաթնովագիտության ասպարեզում, Ախվերդյանից հետո դափնին պատկանում է ռուս քնարերգակ Պոլոնսկուն։ Նրան է պատկանում նաեւ Սայաթ-Նովային նվիրված առաջին բանաստեղծության հեղինակը լինելու պատիվը։ Արդ, ավելի քան մեկ դար է անցել 1914թ. մայիսի 15-ին Թիֆլիսի Սուրբ Գեորգ եկեղեցու գավթում հանճարեղ գուսանի մահարձանի բացմամբ սկիզբ առած ավանդական Վարդատունից, այդ ընթացքում բնագրերի լեզուներով եւ ռուսերեն թարգմանությամբ բազմիցս հրատարակվել են Սայաթ-Նովայի խաղերի լիակատար ժողովածուներ, նրա մասին գրվել են մի շարք մեծարժեք մենագրություններ ու հոդվածներ։ Սակայն, չնայած այդ ամենին, Յա.Պոլոնսկու 165 տարի առաջ գրած ուսումնասիրությունն ու բանաստեղծությունը այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքն ու նշանակությունը եւ արժանի են ուշադրության։

ՎԱՀԱՆ ՄԱՂԱՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու Երեւան

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԱՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԱՅՍ ՏՈՆԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏՈՆ Է»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի բարձրագույն ղեկավարության եւ հուշահամալիր այցելած հյուրերի հետ մասնակցեց Հանրապետության տոնին նվիրված հանդիսավոր միջոցառմանը եւ զորահանդեսին:

Նախագահը ծաղկեպսակ դրեց Սարգսյանի ճակատամարտի հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցեց: Հայաստանի նախագահը ողջունեց տոնի կապակցությամբ անցկացված զորահանդեսի մասնակիցներին, շնորհավորեց Հանրապետության տոնին առթիվ: Հանդիսության մասնակիցների հետ Հայաստանի նախագահը դիտեց հուշահամալիրում կազմակերպված տոնական մշակութային ծրագիրը:

Սերժ Սարգսյանը Սարգսյանապատում շնորհավորական ուղերձ հղեց Հանրապետության տոնի առթիվ: Նա նշեց, որ

այս տոնը մեզ համար առաջին հերթին փրկության տոն է:

Նախագահին, անդրադառնալով այս տարվա ապրիլի սկզբի ռազմական իրադարձություններին, նշեց, որ դրանք ավելի տեսանելի դարձրին մի շարք իրողություններ՝ թե՛ լավ, թե՛ վատ, թե՛ մեր ներսում, թե՛ մեր շուրջը:

«Դրանց մեջ ինձ համար ամենակարեւորը մեր նոր սերունդն է՝ անկախության սերունդը, որ ե՛ւ մեզ, ե՛ւ բոլորին ցույց տվեց, որ ինքն է իսկապես տերն ու պատասխանատուն իր երկրի: 1918 թվականին «Մայիսի 28» կերտողները կարող էին միայն երազել նման կանոնավոր բանակ եւ նման նոր սերունդ տեսնելու մասին: Մենք դա տեսանք: Նոր Սարգսյանապատ չի լինելու, որովհետեւ մեծ հաշվով դա հուսահատական պատերազմ էր: Այնտեղ կռվողներն արդեն չգիտեին, թե ինչ երկրի քա-



ղաքացի են, կամ քաղաքացի՞ են արդյոք: Նոր Սարգսյանապատ չի լինելու, որովհետեւ կա պետություն: Կա անկախության սերունդ, որ ուզում է քայլել ժամանակակից աշխարհին համընթաց եւ քայլելու է: Անկախության սերունդ, որ ուզում է քայլեցնել իր երկիրն առաջ եւ քայլեցնելու է: Անկախության սերունդ, որ բոլորից ճիշտ է հասկացել մայիսի 28-ի պատգամը», - նշեց Հայաստանի նախագահը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ



Դրանք վարել է հյուրընկալող երկրի՝ Ղազախստանի նախագահ, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նախագահ Նուրտուլթան Նազարբաևը: Նիստերին մաս-

նակցել է նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը, ով խորհրդի անդամների քննարկմանն ու հաստատմանն է ներկայաց-

Մայիսի 31-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Աստանայում Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս պետությունների ղեկավարների՝ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, Ղազախստանի նախագահ Նուրտուլթան Նազարբաևի, Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Աթմաբաևի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ մասնակցել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նեղ, ապա՝ ընդլայնված կազմով նիստերին:

րել նիստերի օրակարգը:

Միության անդամ պետությունների ղեկավարները օրակարգի շրջանակներում քննարկել են Եվրասիական տնտեսական միության արտաքին առեւտրատնտեսական հարաբերությունների հետագա ընդլայնման վերաբերյալ հարցեր:

Ընդլայնված կազմով նիստի ավարտին նախագահները

ստորագրել են ավելի քան մեկ տասնյակ փաստաթղթեր, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության նավթի եւ նավթամթերքների ընդհանուր շուկաների ձեւավորման մասին հայեցակարգը:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ելույթ է ունեցել բարձրագույն խորհրդի ընդլայնված կազմով նիստում:

ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԱՐՑԱԽՈՒՄ

«Օլիմպիական»-ում հունիսի 1-ին տեղի է ունեցել «Համահայկական խաղերի Համաշխարհային Կոմիտե» հասարակական կազմակերպության Գործադիր կոմիտեի նիստ՝ ՀԽՀ4 նախագահ Իշխան Զաքարյանի ղվխավորությամբ:

Օրակարգի հաստատումից հետո քննարկվել է «Համահայկական խաղերի Համաշխարհային Կոմիտե» հասարակական կազմակերպության կանոնադրության փոփոխությունների եւ լրացումների նոր խմբագրությամբ տարբերակը ու դրա հետ կապված նիստի մասնակիցների որոշ բանավոր առաջարկները:

Նիստի ընթացքում ՀԽՀ4 նախագահ Իշխան Զաքարյանն առաջարկել է Հա-

մահայկական 7-րդ ամառային խաղերն անցկացնել Արցախում: Առաջարկը մեծ ոգեւորությամբ է ընդունվել բոլոր ներկաների կողմից:

Գործադիր կոմիտեի անդամները քննարկել են նաեւ Արցախում անցկացվելիք խաղերի կազմակերպչական աշխատանքների հետ կապված խնդիրները, դրանց լուծման տարբերակները:

ՀԽՀ4 գործկոմը որոշում է ընդունել նաեւ ՀԽՀ4 Գլխավոր Ասամբլեան անց-

կացնել Արցախում՝ 2017թ. սեպտեմբերի 3-ին:

ՀԽՀ4 գործկոմի նիստում քննարկվել է նաեւ Համահայկական 2-րդ ձմեռային խաղերի անցկացման հարցը: Արդյունքում որոշում է կայացվել Համահայկական 2-րդ ձմեռային խաղերն անցկացնել 2018թ. փետրվարին՝ Ծաղկաձորում:



ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՆՎԱՋԵԼ Է

Հայաստանի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը միաձայն որոշեց «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից սպառողներին վաճառվող բնական գազի նոր սակագները:

գար 700 դրամ՝ սպառված յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր բնական գազի համար: Նախկինում այն 156 հազար դրամ էր: Ամսական 10 հազար խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող սպառողների համար սահ-

մանվել է վաճառվող բնական գազի սակագինը 256.56 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ սպառված յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի համար: Նախկինում այն կազմում էր 276.98 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Սահմանված սակագները ուժի մեջ կմտնեն 2016-ի հուլիսի 1-ից:

Հանձնաժողովը սակագների վերանայման հայտ ստացել էր «Գազպրոմ Արմենիա» ընկերությունից ապրիլի 29-ին:



Ամսական մինչեւ 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող սպառողների համար բնական գազի սակագինը սահմանվել է 146 հա-

ԲԱՅՎԵՅՑ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂԻ ՀՈՒՆԱՐՁԱՆԸ

Երեւանի մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի հարակից այգում տեղի ունեցավ Գարեգին Նժդեհի արձանի հանդիսավոր բացումը, որին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ղվխավորությամբ ներկա էին մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ:

Արձանը բացեցին Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանն ու Նժդեհի ծոռը՝ Արմեն Բաբայանը:

Արձանի հեղինակը Գագիկ Ստեփանյանն է:



ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԿՈՄԻՏԵԻ ԱՆՊԱՍ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնականայնում մայիսի 30-ից հունիսի 1-ը տեղի է ունեցել «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» 2003թ. կոնվենցիայի անդամ պետությունների Գլխավոր ասամբլեայի 6-րդ նստաշրջանը, որի ընթացքում կայացան Կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի ընտրությունները՝ 2016-2020թթ. ժամանակահատվածի անդամակցության համար: Երկրորդ տարածաշրջանային խմբից (Արեւելյան Եվրոպայի երկրներ) չորս տարի ժամկետով ընտրվել է Հայաստանը՝ ստանալով Կոնվենցիայի անդամ երկրների միաջայն աջակցությունը:

ՄԱՍՅՈՒՆԱԿԱՆ ԳՍՅՄԱՆԱԿԱՐԳ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի եւ Իրանի կառավարությունների միջեւ նախատեսվում է ստորագրել քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին համաձայնագիր: Ըստ համաձայնագրի, երկու պետությունների քաղաքացիները սովորական եւ դիվանագիտական անձնագրերով առանց մուտքի արտոնագրի կարող են մուտք գործել տարանջամբ անցնել դուրս գալ եւ գտնվել միմյանց պետությունների տարածքում՝ առավելագույնը 90 օր ժամկետով՝ 180 օրվա ընթացքում:

15 ՄԻԼԻԱՐԴ ԳՐԱՄ՝ ԵՍՏՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵԹԻ

Եվրասիական տնտեսական միության ընդհանուր բյուջեից այս տարվա 4 ամիսների ընթացքում Հայաստանը ստացել է 15 միլիարդ 438 դրամ գումար: Անցած տարի ողջ տարվա կտրվածքով Հայաստանը Եվրասիական տնտեսական միության ընդհանուր բյուջեից ստացել է ավելի քան 53 միլիարդ դրամ: Այս տարի էլ ԵՍՏՎ ընդհանուր ֆոնդից Հայաստանի մասնաբաժինը գրեթե նույնն է մնալու:

ՄԵՎՍԵԻ ՄԱԿԱՐԳՍԿԸ ԲԱՐՁՐԱՋԵԼ Է

Սեւանա լճի մակարդակը մայիսի 30-ի դրությամբ հասել է նոր բարձր միջի, որը չի արձանագրվել 1963 թվականից ի վեր: Ինչպես տեղեկացրին Գավառի «Օրհուս» բնապահպանական տեղեկատվական կենտրոնից, այդ ցուցանիշը 14 սանտիմետրով բարձր է նախորդ տարվա նույն օրվա միջից: 1962 թվականին Սեւանա լիճը, ըստ պաշտոնական տվյալների, ծովի մակերեսույթից գտնվել է 1900 մետր 80 սանտիմետր բարձրության վրա: Մեկ տարվա ընթացքում այն անկում է ապրել մոտ 80 սանտիմետրով: Սեւանի մակարդակի բարձրացման շրջանի սկզբից՝ 2003 թվականից ի վեր այժմ ստացվել է առավելագույն միջը՝ 1900 մետր 66 սանտիմետր:

«ԱՄԵՐԻԿԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑՈՒՔԸՈՒՆ ԱՐԱՋՆՈՒԹՅԱՆ ԶԵՄԳԻՐՈՆ

Եզրագիծը հարեց Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն լիգայի առաջնությունը: Առաջին անգամ երկրի չեմպիոնի կոչումը նվաճեց Մարտունու «Ալաշկերտ» թիմը: Առաջնության մրցաշարային աղյուսակի երկրորդ հորիզոնականը զբաղեցրեց Գյումրիի «Շիրակը», երրորդը՝ Երեւանի «Փյունիկը»:

Բարձրագույն լիգայի մրցաշարային աղյուսակը եզրափակում է Երեւանի «Ուլիսը», որը 27 խաղերից կարողացել էր հավաքել ընդամենը 2 միավոր:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

04.06.2016. Սուրբ Ներսես Մեծ Հայրապետի եւ խաղ եպիսկոպոսի հիշատակության օր



05.06.2016. Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց

06.06.2016. Հիշատակ Սուրբ Եպիփան Կիպրացու, Բաբելաս Հայրապետի եւ նրա երեք աշակերտների

07.06.2016. Սուրբ Կոստանդինոս կայսեր եւ նրա մոր՝ Դեղինի հիշատակության օր

09.06.2016. Սուրբ Թեոդոտոս Գաղատացու, Թալիյա բժշկի եւ 7 կույսերի հիշատակության օր

ՀԱՅՈՒՄՅԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԵՆՆ Ի ՎԻՐԱՊԻ ՏՈՆԸ

Մայիսի 28-ին, ավելի քան 50 թրիխահայ ուխտավորներ, Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապի տոնի առիթով ուխտի գնացին Բվենո Բարբլիի տարածաշրջանի Մառնեուլիի շրջանի Շահունյանի Սուրբ Աստվածածին եկեղեցի:



Թրիխահայ ուխտավորներով եւ տեղի հավատացյալներով լեցուն Սուրբ Աստվածածին եկեղեցում Տեր Վազգեն եպիսկոպոս Սիրգախանյանի նախագահությամբ Վիրահայոց թեմի առաջնորդի օգնական հոգեշնորհ Տեր Խորեն վարդապետ Յովհաննիսյանը մատուցեց Սուրբ եւ Անմահ պատարագ:

Հավարտ Սուրբ պատարագի Վիրահայոց թեմի առաջնորդը իր օրհ-

նությունը բաշխեց ներկաներին եւ շնորհավորեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապի տոնի եւ Հայաստանի Հանրապետության պետականության վերականգնման օրվա կապակցությամբ: Սրբազան Հայրը բարձր գնահատեց շահունյանցի հավատացյալների մասնակցությունը Աստվածամոր անունը կրող զորավոր տաճարում մատուցվող Սուրբ պատարագին:

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

2016 թվականի մայիսի 29-ին, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին տոնախմբեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը: Տոնի առիթով Վիրահայոց թեմի եկեղեցիներում մատուցվեց Սուրբ եւ Անմահ պատարագ:

Հավաքարի Սուրբ Էջմիածին եկեղեցում Սուրբ եւ Անմահ պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի

առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Սիրգախանյանը: Պատարագին ներկա էին Հայաս-

տանից ժամանած Գրողների միության պատվիրակությունը՝ նախագահ Էդվարդ Միլիտոնյանի գլխավորությամբ, Վրաստանում ՀՀ դեսպանության դիվանագետներ, համայնքային գործիչներ, մտավորականներ, բազում հավատացյալներ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՍՐԲՈՒՅԻ ԴՈՒՐԳԱԼՅԱՆԸ ՃԱՆԱԶՎԵՑ «ՃԱՅՃԹՈՃԵՈ»



Վերջին տարիներին հաճախակի են անցկացվում դպրոցական տարբեր օլիմպիադաներ ու մրցույթներ՝ առանձին առարկաներից: Բացառություն չէր նաեւ King-ի կողմից անցկացված օլիմպիադան, որին ակտիվորեն մասնակցեցին Վրաստանի դպրոցների աշակերտները: Հերթական մաթեմատիկայի օլիմպիադային մասնակցեց եւ հաղթող ճանաչվեց Ախալցխեի շրջանի Ծղալբիլայի դպրոցի հինգերորդ դասարանի աշակերտուհի Սրբուհի Դուրգալյանը, ով արժանացավ դիպլոմի: Նշենք, որ Սրբուհին արդեն մի քանի տարի մասնակցում է հանրապետական օլիմպիադաների ու մրցույթների: Մասնավորապես, անցյալ տարի մաթեմատիկայից եվ անգլերենից անցկացված օլիմպիադաներին նա կարողացավ հասնել եզրափակիչ փուլ՝ ճանաչվելով սրամիտ, թափանցիկ միտք ունեցող (չձձճճԹՈՃԵՈ) սանուհի:

Հաջողություն մաղթենք աղջնակին, որ առաջիկայում եւս բազում հաղթանակներ ունենա մրցույթներում եւ բարձր պահի իր դպրոցի պատիվը:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ


ՄԱՑԱԿԱՆ ԱԹՈՅԱՆ

Ախալքալաքի մունիցիպալիտետի կրթական համակարգը ծանր կորուստ կրեց: Հիսունվեց տարեկան հասակում կյանքից հեռացավ շրջանում ճանաչված մտավորական, վաստակաշատ մանկավարժ, Վաչիան գյուղի հանրային դպրոցի տնօրեն Մնացական Սարգսի Աթոյանը:

Ծանր է անցյալով խոսել այնպիսի մարդու եւ կրթական գործչի մասին, որպիսին Մնացական Աթոյանն էր: Մեր ժողովուրդը նման դեպքերում ասում է. «Նա մեռնելու մարդ չէր»: Այո՛, Մնացականը դեռ ուներ անցնելիք ճանապարհներ... Նրա կարճատեւ կյանքը, այդուհանդերձ, արգասաբեր եղավ: Նշանակալից եւ անմոռաց են Աթոյանի կրթական ու հասարակական ոլորտի ձեռքբերումները:

Ծնվել է 1960 թվականին: Գերազանց առաջադիմությամբ ավարտելով ծննդավայրի միջնակարգ դպրոցը՝ անմիջապես ընդունվում Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ: Հենց այս պատերում, ուսանողության տարիներին, ճակատագրի հաճությամբ, գտնում է իր կյանքի ապագա ընկերուհուն՝ Լաուրա Աթեյանին:

Ինստիտուտն ավարտելուց հետո, նրանք ամուսնանում են: Գյումրիում ծնված եւ մեծացած Լաուրան, առանց վախենալու, քաղաքից տեղափոխվում է ամուսնու ծննդավայր Վաչիան, եւ հյուս-



վում է նրանց գեղեցիկ ընտանիքը: Ամուսինները թեթեւի սկսում են իրենց մանկավարժական գործունեությունը: Մնացականը սկզբում աշխատում է շրջանի Դադեշ գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ, այնուհետեւ՝ իր հարազատ գյուղում՝ որպես ուսմասվար, իսկ 1993-ին՝ որպես տնօրեն:

Քսաներեք տարի շարունակ, իբրեւ տնօրեն, ղեկավարեց դպրոցի մանկավարժական կոլեկտիվը: Փոքրկաշատ մեր ժամանակներում նա կրթօջախը ղեկավարեց հմուտ մասնագետի իմացությամբ, ինչի շնորհիվ դպրոցը դիմակայեց ժամանակի մարտահրավերներին: Արվեց ամենը՝ դպրոցը պահպանելու եւ արժանավոր հանգրվանների հասցնելու ուղղությամբ:

Յուրաքանչյուր տարվա մայիսի 7-ին նշում էինք Մնացականի ծննդյան օրը, բայց, ցավոք, 2016թ. մայիսի 7-ին նրան վերջին հրաժեշտը տվեցինք դեպի հավիտեություն:

**Ընկերների անունից
ՆԱՐՑԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՈՒՐԵՆ ԲՐԴՅԱՆ**

	1		2		3		4		5	
6		7		8					9	
		10						11	12	
13					14	15				
				16				17	18	
19		20					21			
	22			23	24		25			
			26		27				28	
29	30		31		32			33		34
	35						36			
			37		38					
39		40				41		42		43
				44		45				
46	47		48		49			50	51	52
	53					54			55	
56					57			58		
		59			60				61	

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.

6.Տիսի: 8.Գյուլաքաղաք Վրաստանում: 10.Օրգանիզմը խթանող ազդեցություն ունեցող ըմպելիք: 11.Միապետների նախկին պաշտոնական անվանումը մի շարք երկրներում: 13.Ստեղծագործող արվեստագետ հին եւ միջնադարյան Հայաստանում: 14.Սպորտային հազուստ եւ պարագաներ արտադրող ընկերություն: 16.Կավե սափոր: 17.Սլավոնական ժողովուրդ: 19.Տղմուտ վայր: 21.Վրաստանում քրիստոնեություն քարոզիչ, սուրբ: 22.Հայ արքա Հայկազունների տոհմից: 23.Գիշտիչ կենդանի: 27.Օգտակար հանածո: 29.Քաղաք Հայաստանում: 32.Դիցուհի Սկանդինավյան առասպելաբանությունում: 33.Քաղաք Իտալիայում: 35.Եվրոպիո, մոնղոլիո: 36.Հացահատիկ: 37.Երաժշտական գործիք: 39.Նախկին: 42.Քաթան: 44.Երիտասարդ: 46.Անասնակեր: 49.Լուսատու սարք: 50.Գետ Ռուսաստանում եւ մասնակի Ֆինլանդիայում: 53.Ֆրանսիացի երգչուհի Պատրիսիա ...: 54.Խոսքի մաս: 55.Գետ Ֆրանսիայում: 56.Մազ սանրելու հարմարանք: 57.Բնական շինանյութ: 58.Գետ Հարավ-Արեւելյան Ասիայում: 59.Միամյա

բույս: 60.Անասունների ամբողջական մորթուց պատրաստված պարկ: 61.Հաճելի զբոսայգի:

ՈՒՂՂՈՆԱԿԱՆ.

1.Ունակ, կարող: 2.Դյուրաբեր: 3.Լիլիպուտ: 4.Մանրահատիկ ապար: 5.Արտասովոր: 7.Ուսի վրա ամրացվող տարբերանշան: 9.Շումերական քաղաք-պետություն: 12.Բանական, խոսող: 15.Հայ բանաստեղծ Պետրոս ...: 18.Բանջարեղեն: 20.Արեւելյան քաղցրավենիք: 24.Բերանացի: 25.Տանտիրուհու գործերից: 26.Մեծ մուրճ: 28.Հայկական տոմարի չորրորդ ամիսը: 30....-փառք: 31.Ժողովրդական զրույց, որի հիմքում ընկած է իրական դեպք: 33.Կավագործ: 34.Լինում է շրջանաձեւ եւ տափակ, պտտվում է իր առանցքի շուրջը: 38.Ետ (հակ.): 40.Ֆրանսիացի բանաստեղծ ... դը Բերթերակ: 41.Հայ բանաստեղծ, արձակագիր Գուրգեն ...: 42.Իգական սեռի ներկայացուցիչ: 43.Հեռուստաալիքներ «որսող» սարք: 45.Շալվար: 47.Վրացի գրող եւ պատմաբան ... Մորչիլաձե: 48.Կիտուկ, դիզակ: 51.Թշնամի, հակառակորդ: 52.Գիշտիչ թռչուն:

Կազմեց ԷԼԼԱ ԱՌԱՐԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.

1.Մարքս: 6.Մարս: 10.Ամբուլ: 11.Նախիրտ: 12.Մուշ: 13.Հրանտ: 17.Նանա: 20.Վիուկ: 22.Ավատար: 23.Ուտիք: 25.Մակիչ: 28.Աղանա: 30.Իվանե: 32.Լաստ: 33.Ման: 34.Ասորի: 35.Քսակ: 38.Մալի: 40.Տիաս: 43.Տա: 44.Արագ: 45.Ամուր: 46.Սառա: 47.Անիտա: 49.Կռան: 52.Ռե: 54.Երե: 55.Իվե-տա: 56.Դավ: 57.Մայա: 59.Սեն: 60.Ամազոն:

ՈՒՂՂՈՆԱԿԱՆ.

2.Ալիք: 3.Քրիս: 4.Ամուր: 5.Բույն: 7.Արմեն: 8.Սաշա: 9.Անցավ: 14.Ագարա: 15.Տնամերձ: 16.Ճկուն: 18.Արա: 19.Արի: 21.Հուլ: 22.Աքիս: 26.Կամսար: 27.Չինգիզ: 28.Ավարտ: 29.Աշորա: 31.Վտակ: 36.Սաբա: 37.Թամար: 38.Մարկ: 39.Լազար: 41.Հրազդան: 42.Ստաս: 43.Տատ: 48.Նվեր: 50.Ուեւա: 51.Նետոն: 53.Եղեն: 58.Աս:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445